



2. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ*

18. ՀՈՌՄ ԿՊՌՍՏԵ ՀՈՆՔԵՐԸ

Հակառակ թուղթն փցուն մուրհակներուն, զորս ժամանակ առ ժամանակ հաջողեցավ կորզել հայ հոգևորականներեն, պտուղ շարժին Հոռմի փորձերը բերդը գրավելու համար ներսեն: Ամբողջ դար մը ճգններ, վատներ էր ան, ու դառնությամբ կտեսներ հիմա, որ անոնք ուժ չունեցան Հայ Եկեղեցին ծունկի բերելու: Ան կտեսներ, որ սիրալիր միջոցներով պիտի չգրավվի բերդը: Մինչև այդ պահուն իր գործակալները հրահանգ ունին քաղցրությամբ մոտենալ իրենց զոհերուն ու որսալ զանոնք խալժեր ցույց տալով: Ինչպես կգրե հայ բանասեր մը, «17-րդ դարու վերջերին Պոլսում գտնվող միսիոնարները պատկանում էին ճիզվիտների, կապուսիներին և դոմինիկյան կարգերին: Մինչև 17-րդ դարու վերջը միսիոնարները իրենց գործունեության ընթացքին բարյացակամ հարաբերությունների մեջ էին Հայոց Եկեղեցու և նրա ղեկավարների հետ և սիրալիր վերաբերում ունեին դեպի հայ ժողովուրդը: 1654 թվականին ճիզվիտ Florian լույս ընծայեց «Etat présent de l'Arménie tant pour le temporel que pour le spirituel» գիրքը, որի մեջ, հիմնվելով Թուրքիայից ու Պարսկաստանից ճիզվիտ միսիոնարներից ստացված տեղեկագրեր վրա, տալիս էր Հա-

յաստանի նկարագրությունն ու միսիոնարների հայերի մեջ կատարած քարոզչական գործի պատկերը: Իր գրքի վերջում, նա խորհուրդներ է տալիս հայերի մեջ գործելու պատրաստվող ապագա միսիոնարներին: Այդ խորհուրդներից ամենակարևորներն են.— Անհրաժեշտ է խիստ ուշադիր ու բարեկամ լինել հայոց կաթողիկոսի, վարդապետների ու քահանաների հետ, որովհետև տեսնելով բարեկամությունը իրենց հոգևոր առաջնորդների հետ, հայերն առանց կասկածի ու վստահությունից կլսեն միսիոնարների քարոզները: Որովհետև հայերը շատ են կապված իրենց սովորություններին ու ծեսերին, կաթոլիկ կրոնի հաջողության համար, պետք է բավականանալ միայն նրանով, որ հայերն ընդունեն Հռոմեական Եկեղեցվո ղեկավարները, իսկ հայ եկեղեցական ծեսերն ու եկեղեցական ավանդությունները պետք է թողնուան ինքնուրույն, վերջապես, հայերից շատերը չգիտեն նույնիսկ, թե ի՞նչ բան է հերձվածը. միսիոնարի ճարտիկությունը նրա մեջ է, որ նրանց կաթոլիկ դարձնի առանց որ նրանք նկատեն իրենց հերձվածող կամ հերետիկոս լինելը»⁴⁵¹:

Արդարև, առաջին միսիոնարները, որոնք հայ ժողովուրդին հետ շփում առին, հրահանգ ունեին մեղմ ու անուշ վարվելու իրենց զոհերուն հետ: Սիրալիր միջոցները բավական չեղան սակայն զանգվածները հրապուրելու հա-

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1962 թվականի № № Բ-ից, Ժ-ից և 1963 թվականի № № Ա-ից, Բ-ից, Գ-ից, Դ-ից, Ե-ից, Զ-ից, Է-Ը-ից, Թ-ժ-ից և ժԱ-ից:

⁴⁵¹ Հովհաննես Զավրյան, «Հայրենիք» ամսագիր, 1933 փետրվար, էջ 113—114:

մար: Պոլիսը անձնատուր շնորհալ: Նոր ռազմավարութիւն պետք էր, որովհետեւ կապուսին միսիոնարներուն մեղմ քաղաքականութիւնը երբեք պտուղ պիտի չտար: Նոր ռազմավարութիւնը վստահեցաւ այս անգամ ճիշդփորձներուն: Անոնք հարձակումով պետք է երթային գրավել բերդը:

«Ահա թե ինչպես է բացատրում հայ-միսիոնարական հակամարտութիւնները Renaudet արքան, գիտնական արևելագետը, որ մեծ համբավ ունեւր Լուզովիկոս ԺՂ-ի արքունիքում և որի հուշագրերը նախարարները բերում էին իբրև հիմնավորում իրենց առաջարկութիւններին: Ավետիք պատիարքի գործի առթիվ 1710 թ. հոկտեմբերի 8-ին Լուզովիկոս ԺՂ-ին ներկայացրած իր զեկուցագրում կգրե, թե կապուսինները հայերից շատերին գաղտնի կերպով դարձրել էին կաթոլիկութիւն: հրաժարեցնելով նրանց Ազգային Եկեղեցուց. բայց որպէսզի գաղտնիքը երևան չգա, կապուսինները ստիպված արտոնել էին, որ նորադարձ հայերը երեք կիրակիներով մեկը այցելեն Հայոց Եկեղեցին և կատարեն բոլոր ծեսերը, ի բաց առեալ խոստովանութիւնը. բացի այդ՝ կաթոլիկացած հայերին արտոնվում էր հայ հոգևորականներին վճարել բոլոր եկեղեցական տուրքերը: Կապուսինները պնդում էին, թե իրենց այս ընթացքով իրենք գործում են Հավատքի քարոզութիւն ժողովի հրահանգներով:

Ճիշդփորձներն, ընդհակառակը, 17-րդ դարի վերջից սկսած, արգելում են կաթոլիկութիւն հարած հայերին այցելել ազգային եկեղեցիներն ու կատարել Հայ Եկեղեցւոյ պարտավորութիւնները: Իբրև ավելի ազդեցիկ ու գորավոր՝ նրանք հակադրեցին կապուսիններին ենթարկվել իրենց հրահանգներին, և 17-րդ դարի վերջին ու 18-րդ դարի սկզբի տարիները անցան հայերի և կաթոլիկների սուր հակամարտութիւնաց մեջ: Մոռացութիւն տրվեցին հենց իրենց՝ ճիշդփորձերի կողմից, երկար տարիների փորձի հիման վրա մշակված մեղմ ու բարեկամական ազդեցութիւն ձևերը: Հայերի դեմ հայտարարվեց բիրտ ու դաժան պատերազմ՝ անորակիւնի նեղութիւններով ու անհաշիվ զոհերով»⁴⁶²:

Առաջին հերթին պետք է կաթոլիկ դարձած հայերուն արգիւյթը հայ եկեղեցիներ հաճախելը, անոնց շփում ունենալը հերձվածողներու հետ:

Կղեմես ԺԱ պապը Ժխտական պատասխան տված էր Պարսկաստանի հայ կաթոլիկներու այն հարուման, «թէ արժա՞ն իցէ քարոզաց հաւոց [կաթոլիկադ] յաճախել յեկեղեցիս հերձուածողաց և հերետիկոսաց, սոյնպէս և

արժա՞ն իցէ կաթոլիկեաց ի ձեռաց սոցա ընդունել զխորհուրդս, լինել առնթերակաց այլոց պաշտամանց և հանդիսից նոցա»⁴⁶³:

Ժխտական պատասխանը, զոր պապը կուտար, նվիրական էր բոլոր այն վայրերուն համար, ուր կգործեին միսիոնարները:

Հայ կաթոլիկ հոգևորականներն ումանց թելադրութիւնը Հռոմի մտտ ուժ չէր կրնար ունենալ զայն իր վճռեն ետ կեցնելու համար: Այդ հոգևորականներն մեկը Մխիթարն էր, Այդ հոգևորականներն մեկը Մխիթարն էր, որմն ճշտումով, իբրև իրազեկ անձից, ուզեցին նրա եղբակացութիւնը այն մասին, թե արդյոք հայ կաթոլիկները կարո՞ղ են այցելել հայ ազգային եկեղեցիները, և այդ եկեղեցիներում կարո՞ղ են հոգևոր արարողութիւններ կատարել: Նման եղբակացութիւն պաներ հանջվեց և Պրոպագանդայի դպրոցի նախկին աշակերտ հաշատուր վարդապետ Առաքելյանից, որ Թուրքիայում առաքելական միսիոնարի պաշտոն էր կատարել: Նրանք երկուսն էլ համանման կարծիք հայտնեցին՝ գտնելով անհրաժեշտ արտոնել, որ կաթոլիկ հայերը հաճախեն Հայ Ազգային Եկեղեցին և այնտեղ հոգան իրենց հոգևոր պետքերը: Նրանց այս եղբակացութիւնը Հռոմը մերժեց և արգելեց, որ հայ կաթոլիկներն իրավունք ունենան հաճախելու հայ ազգային եկեղեցիները: Խաճախուր վարդապետի եղբակացութիւնները յատկներն լեզվով հրատարակված են «Schiarimenti documenti»-ի մեջ (Ք. 84), իսկ Մխիթարի եղբակացութիւնը համարվում է կորած: Զմյուռնիայում 1879 թ. տպված բնագիրը («Աբբայ Մխիթարայ վարդապետի արարեալ պատճառք որք առերին ընդդէմ նոցին, որք սանն թէ ոչ երբք պարտ է գնալ ուղղափառաց ի ժամն հայոց») համարվում է պիճելի, թեև եղբակացութիւնն ընդհանրութիւնը անվիճելիորեն նույնն է ինչ որ է Խաշատուր վարդապետինը»⁴⁶⁴:

«Մենք տեսանք,— դիտել կուտա Օրմանյան,— Գալանոսի հայ վարդապետի տարադ իսկ հազնիւր և հիսուսյան արեղաներուն հայոց եկեղեցիներուն մեջ քարոզելը. բայց այն ժամանակները անցած էին, և այս միջոցին սկսած էին տարբեր մտածել և գործել. ուստի ամենախիստ պատիժներով արգիւյցին Հայոց Եկեղեցին մտնելը: Ասկե ծագելիք անտեղութիւնները դիտել տվողին, Պարթոնի՞՛ Հիսուսյանց վնասհայրը կպատասխանէր, թէ չէր վրնար ընդունի, որ կաթոլիկներն ամենաիտքը հաղորդակցութիւն մը ունենաին իրենց հերձվածող եղբարց հետ, և թե ամենն

463 Պալմյան, հիշված աշխատութիւնը, էջ 171:
464 Հովհաննէս Զավրյան, «Մխիթարյան միաբանութիւնն ըստ իրենց», «Հայրենիք» ամսագիր, 1931 թ. հոկտեմբեր, էջ 107:

462 Հովհաննէս Զավրյան, «Հայրենիք ամսագիր», 1933 թ. փետրվար, էջ 114—115:

դան շարձարանքները աշվին պետք էր առնելին»⁴⁵⁵։

Հայ ղեկավարները չէին կրնար անտարբեր մնալ արշավանքի այս նոր մեթոդներուն առջև։ Պաշտանպուծյան համար ալ նոր մեթոդներ անհրաժեշտ էին։ Անհրաժեշտ էր փոխադարձ պայքարի անցնիլ միսիոնարներուն դեմ։

Եվ ահա պատրիարքներ ունեցավ Պոլիսը, որոնք շվարանեցան նույնիսկ ծայրահեղութեանց գնով պաշտպանել իրենց վստահված ավանդը։ Օրմանյան շատ ալ բնական կգտնեհայ հոգևորականութեան ցույց տված այդ նախանձախնդրութունը, համաձայն չըլլալով հանդերձ կիրարկված ծայրահեղութեան. «Շոտմեականք ծանր խոսքերով կպախարակեն և կնախատեն ժամանակիս մեջ ազգային իշխանութիւնը և պատրիարքութիւնը վարողները, իբր բռնավոր հալածիչներ և անգութ դահիճներ, իբր թե անոնց պարտքը չըլլար՝ իրենց հոտին մեջ մտնող օտարներուն գրգռութիւնը արգիլել, իրենց Եկեղեցին անարգողներուն դեմ դնել, և հայ եկեղեցիներն հեռացնելով լատին եկեղեցիներ տանելու անխոհեմ և վտանգավոր ձեռնարկին առջև անհել։ Այո՛, մենք պիտի հիշենք կաթողիկոսյան առջև անհելու համար գործածված ուժգին և բուռն միջոցներն ալ, բայց պետք է ճանչնալ, որ անոնց առաջին պատասխանատուութիւնը լատիններուն վրա կծանրանա, իրենց անխոհեմ և մոլեռանդ պահանջումներով, և իրենց հետևողներուն խիղճները շարժողովով, մինչ այսպիսի բաներ չէին տեղի ունեցած, ցորչափ գործը ներքին զգացմանց շրջանակի մեջ կմնար, և իրենք ալ կզգուշանային նորանոր պահանջներէ։ Հայոց Եկեղեցին քրիստոնյա էր այդչափ դարերի ի վեր, Ուղղափառ Եկեղեցի էր ի սկզբանէ անտի, միշտ կմնար ինչ որ էր, միայն Արևմուտքի դիպաբարդած նորութիւններն կխորշեր, և լատիններուն պետք չէր՝ որ Արևելքի առաքելական և հնավանդ քրիստոնյաները ստիպեին, իրենց դպրոցական և նորանոր վարդապետութեանց համակերպիլ»⁴⁵⁶։

Հայ ժողովուրդի ընդդիմութիւնը ընկճելու համար ուրիշ միջոցներ ալ ունեին ճիզվիտները։ Առաջին հերթին ղեսպաններու պաշտպանութիւնը։ Անոնք իրենց զորավիգ պիտի ըլլային՝ իրենց նոր հարձակողականին մեջ, մանավանդ երբ թուրք իշխանութիւնները փորձեին արգելք հարուղանել իրենց դեմ։ Առանց ղեսպաններու աջակցութեան, ճիզվիտները պիտի չհաջողեին ընկճել հայ ժողովուրդի գրգռութիւնը, որ սկսեց էր աճիլ և մտա-

հոգիլ դառնալ, քանի իրենք սկսել էին կիրարկել իրենց նոր մեթոդները։

«Պոլսահայերի ներքին վեճերն ու երկպառակութիւնները, կաթողիկ հայերի իրար հաջորդող հալածանքներն ու հաջողութիւնները նկարագրված են Միքայել երեց Խարբերդցու էջմիածնի կաթողիկոսին ուղղած 1706 թ. դեկտ. 20 «արդուխալ»-ում»⁴⁵⁷։ Իեսպերը համարյա նույն ձևով է նկարագրել և հուանդացի De la Motraye «Voyage en Europe, Asie et Afrique», La Hey, 1727, vol. I գրքում։ Նա պատմում է, որ Մելքիսեղեկ Սուպհի պատրիարքի օրով հայոց եկեղեցիներում քարոզելու իրավունք ստացած ճիզվիտների հաջողութիւնները խիստ գրգռել են հայ ազգաբնակչութիւնները իրենց պատրիարքի և լատինասեր հայերի դեմ։ Հայերը մեղադրում էին Մելքիսեղեկ Սուպհիին և նրա կուսակիցներին ոչ միայն կաթողիկոսյան պատկանելու մեջ, այլև այն բանում, որ գործակցում էին միսիոնարներին հայերին կաթողիկ դարձնելու նպատակով և այդ բանի համար խոշոր դուրմարներ են ստացել միսիոնարներից։

Վախենալով, որ այս գանգատները կհասնեն թուրք կառավարութեան ականջը, որը, իհարկե, կբռնէր իր հպատակների կողմը, այլև կամենալով իրենց կողմը գրավել Բարձր դռան համակրանքը՝ ճիզվիտները մի տեղեկագրով դիմեցին բոլոր եվրոպական ղեսպաններին՝ ջանալով համոզել, որ հայերն իրենց ղավանութեամբ հերետիկոսներ ու հերձվածողներ են, հետևաբար անհրաժեշտ է արտոնութիւն ստանալ Բարձր դռնից, որ ճիզվիտները արմատախիլ անեն Հայ Եկեղեցու մոլորութիւնները»⁴⁵⁸։

Եվրոպական այդ ղեսպանները հուսախաբ չըրին շոտմը։ Ֆրանսսան էր գլխավորաբար, որ անոր տրամադրեց իր հովանավորութիւնը հանձնել իր Պոլսո ղեսպանին։ Հայ ժողովուրդը անգամ մը ևս իր կոնակեն կղարներ ասպետական Ֆրանսսան՝ հայոց ղավանական վեճերը մղելով այնպիսի փուլի մը, որ զանոնք պիտի վերածեր եղբայրատաց մոլուցքի մը, ինչպես պիտի տեսնենք նոր դարը թեակոխած ժամանակ։

Պահը ճիշտ ընտրած էր շոտմ իր այս վերջին հարձակողականին անցնելու համար։ Հայ ժողովուրդը այդ պահուն ընկճված էր հոգովով։ Պայքարները, զորս իր հոգևոր պետերը իրարու դեմ մղեց էին ամբողջ դար մը, չէին կրնար անդրադարձած չըլլալ անոր հոգեկան տրամադրութիւններուն վրա ևս։ Մյուս կողմէ, այդ պայքարները թափանցեցր էին նաև ղանգվածներուն մեջ, հակամարտ

⁴⁵⁵ «Ազգագատում», Բ, էջ 2593:
⁴⁵⁶ Անդ, էջ 2693—2694:

⁴⁵⁷ «Կոտնկ հայոց աշխարհին», 1863, էջ 662:
⁴⁵⁸ Հովհաննէս Զավրյան, հիշված աշխատութիւնը, էջ 116:

հոսանքներ ստեղծեց էին ժողովուրդին մեջ և կռվի հաներ զանոնք իրարու դեմ:

Մեր բանասերներեն մեկը, որ մոտեն զննած է դավանական վեճերու տարբեր փուլերը հայ ժողովուրդի ծոցին մեջ, կկարծե, թե «կաթոլիկության համեմատաբար աչքի ընկնող հաջողությունները Պոլսի հայերի մեջ ավելի հեշտությունը կարելի է բացատրել այն ներքին երկպառակություններով, որոնք ի վաղուց անտի բաժանում էին պոլսահայությանը բնիկների ու տեղացիների, հարուստների ու աղքատների, թաղերի ու ծուխների և այլն: Եթե դրան ավելացնենք և այն լեանտական հոգեբանությունը, որ ավելի ու ավելի էր ամրանում պոլսահայերի մեջ, անվստահությունը, նախանձն ու հարգանքի բացակայությունը միմյանց հանդեպ լիովին հասկանալի կդառնա, թե ինչու հայերը այնպես հեշտություն ենթարկվեցին արտաքին ազդեցության: Կաթոլիկ միսիոնարները, որ չէին համարձակվում քարոզել մահմեդականների մեջ և ոչ մեկ հաջողություն չունեցան հույների շրջանում, իրենց բովանդակ ուշադրությունն ու ջանքը ուղղեցին դեպի հայերը»⁴⁵⁰:

Հոռմի համար պատեհ վայրկյան էր բերող ներսեն գրավել փորձելու համար: Պատենը մը պետք էր իրեն՝ գրոհ տալու համար բերդին վրա, և այդ պատենը չէր կրնար ունենալ Հոռմ, եթե Պոլսո հայ գաղութի ծոցին մեջ սեփական կորիզ մը շտեղծեք: Ան ստիպված էր հայ գաղութեն իսպառ անջատել մասնիկ մը, ու զայն կռվան դարձնել իր հետագա գրոհներուն:

Այդ կորիզը, ավա՞ղ, կրցավ ստեղծել:

19. ՃԵՂՔԸ ԿՐԱՅՎԻ

Հոռմի գործակալները այլևս ուրիշ միջոց չունեին, բայց եթե սեփական կռվան ստեղծել իրենց: Առանց նման կռվանի, հնարավոր չէր արշավանքը շարունակել և ընդարձակվիլ: Ցանց տարածելու համար հայ ժողովուրդին մեջ՝ պետք էր որ նախ հենաշան մը մարմին առնելու: Անոնք հաջողեցան ի վերջո այդ հենարանն ունենալ: Դարուն վերջերուն, անոնք կրցեք էին արդեն կաթոլիկ հայերու բավարար թիվ մը ապահովել և անոնց անունով պայքարի անցնիլ:

Հստ հայոց Պատրիարքարանին տրված ֆերմաններու, պատրիարքին հանձնված էր «հայ ազգաբնակչության հաշվառումը և հարկերի ու տուրքերի գանձումը ազգային ու եկեղեցական հիմնարկությունների օգտին, ինչպես նաև ընդհանուր վերահսկողությունը պետական տուրքերի հավաքման վրա: Այս-

պիսով, ամեն մի հայ, որ խուսափում էր Հայ Ազգային Եկեղեցու հետ հաղորդակցություն ունենալուց, դուրս էր ընկնում հաշվառումից ու հարկատվությունից ի վնաս պետության և հայ համայնքի»⁴⁵¹:

Այդ պարագան բավ էր ինքնին, որ մարմին առնելու հայ կաթոլիկ ուրույն կորիզը:

Գալեմբյարյան, հորինելու առթիվ կենսագրությունը «երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու», որոնք Հոռմի հարգեսան, այս վերջիններուն մեջ կհիշե Սարգիս Եվզղիկացի Գասպարյան եպիսկոպոսը, որ Պոլիս եկած է Ժէ դարու վերջերը, ճիշտ այն միջոցին, երբ «տասնե ավելի երեցներ և աշխարհականներ Պատրիարքական Աթոռին վրա ելեջ կկատարեին. գտավ Պոլսո մեջ կաթոլիկների գորավոր խումբ մը, պարագլուս եղավ անոնց, զտեց զատեց զանոնք, զատ հասարակություն մը կազմեց և կաթոլիկ եկեղեցիով հատուկ ամենահին անվանակոչությամբ՝ անվանեց «կաթոլիկ հայեր», իսկ մյուսները «հերձվածող հայեր»: Կաթոլիկ շեղող հայերն ալ անվանեցին զանոնք «ֆոենկ»: Այս «կաթոլիկ» անվանակոչությունն այնպես ազդեցիկ դարձավ, որ դարեր ետքն ալ տակավին մնաց անոնց վրա, մինչդեռ գրեթե անհետացան այն անվանակոչությունները, զորոնք հայերն անոնց տված էին, ինչպես՝ երկարակ, քաղկեդոնիկ, ախթարմա, հերձվածող, հերետիկոս, հեստյալ, լոթերական, շնչահավատ, թերս մեղհեր, պապազավան, հոռմեական, և այլն»⁴⁶¹:

Գալեմբյարյան, Ժէ դարու վերջերը Պոլսո մեջ հայ կաթոլիկներու ստվարացման փաստ կնկատե այն վկայագիրը, զոր 1678 ասպրիլ 15-ին Ղաթթիո Ս. Լուսավորիչ եկեղեցիով 11 քահանաները կուղղեն Լվովի Նիկոլ Թորոսովիչ արքեպիսկոպոսին հանձնարարելու համար զրիմցի Առաքել անուն հայ մը, որ քրիստոնյա գերիներ կազատեր թաթարներու ձեռքեն⁴⁶²: Այդ 11 քահանաները կզրեն արդարև Նիկոլին: «Նիկոլայոսի արհեսպիսկոպոսի: Վհագոյն՝ և երիցս երանեալ տիեզերահամարա՛ւ արհի և արհիապատի սրբազան՝ ուղղաշաւիղ ուղղագնաց և ուղղափառ անձանձիր ուսուցանող, անդիմանիչ ըստահակաց, և ուսուցիչ ուղղափառաց Տեսուդ մերոյ տիրապետի ամենայն լեճաց: Մատուցցի երկրպագութիւն բարձր բազկի և երկնաշու գարշա-

460 Հովհաննես Զավրյան, «Մխիթարյան միարանության բաժանումը», «Հայրենիք» ամսագիր, 1931 դեկտ., էջ 103:

461 Հ. Գրիգորիս Գալեմբյարյան, «Եկեղեցիություններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու», Վիեննա, 1915, էջ 79—80:

462 Անդ, էջ 78:

450 Հովհաննես Զավրյան, հիշված աշխատությունը, էջ 117:

պարի սրբութեանդ: Հայր սուրբ՝ ծանուցուր մեծի անձնութեանդ, մեք Կոստանդիանուպոլսի՝ Ղալաթաու լեալ Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյ միաբան քահանայքս, որ եմք հնազանդ Սրբոյ Կաթողիկէ Առաքելական Եկեղեցւոյ Հոռոմայ: Նախ աւաք երէջ Տէր Անտօնս. Տէր Աստուածատուրս. Տէր Յակոբս. Տէր Յարութիւնս. Տէր Մկրտիչս. Տէր Գասպարս. Տէր Զաքարիաս. Տէր Արրահամս հաւաստեալս և ճշմարտիւ վկայեցուր զաղէտ խղճոյս այսորիկ, որ այս զրմցի Առաքել քրիստոնեայս՝ էր ի դուռն Քաթար խանին կացեալ և էր վաճառական նորին, և որչափ քրիստոնեայ զերի տեսանէր զգինն կուտայր և ազատ կու առնէր...»⁴⁶³

Հոգեկան ի՞նչ երանութեամբ է, որ հայ կաթողիկ պատմիչը կարճանագրեք Հայ Եկեղեցւոյ այդ զօրքարտ պահը, որ հայ ժողովուրդին հատուած մը ընծա բերալ Հոռոմին. «Այսչափ ուրեմն ժէ դարուն մեջ կաթողիկոսաց, արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց և վարդապետաց բազմութիւն (որոնցմէ ոմանց անունը հիշեցնէք) մուրուքիւնը մուրերից թողուլ ի համբուր սիրո՛ւ և հնազանդութեան Հոռոմ Քահանայապետաց դիմեցին հոգւով կաթողիկե միութեան և միաբանութեան Հոռոմ Եկեղեցւոյ հետ: Ի՞նչ զեղեցիկ և ցանկալի տեսարան. երկնավոր շնորհքն էր որ կազդեր, այն շնորհք, որ միտքերը կլուսավորե և սիրտերը կշարժե. բայց և այնպես Հոռոմայ Քահանայապետաց գործակցութիւնն ալ մեծ էր և ազդու: Քահանայապետական առաքելութիւններն ու պատգամավորութիւններն էին, որ այնչափ խնամք և օգնութիւն ընծայեցին արևելյան ազգաց և առանձինն հայոց ազգին, որուն մեջ ի սկզբանէ խորունկ արմատ ձգած էր կաթողիկե հավատքը: Այս ամենայն ստույգ է. այսուամենայնիւ այնչափ այնչափ հավատող դավանութեանց կրկնումը և նույնիսկ Հոռոմ Քահանայապետաց անդադար ճիգն ու խրախույսը, որ իրենց նախնայց հավատող ճամբին շնորհին, շիրջան արգելուլ, որ ոմանց տգիտութիւնն կամ անուղղա ցանկութիւնը, և ոմանց մուրուքիւնն ու նախապաշարմունքները ընդդէմ հոռոմեական միութեան՝ նորեն-նորեն շրտանին և շարմատանան հայոց մեջ՝ մանավանդ Կոստանդնուպոլսոս բնակչաց մեջ, ուր կրոնական հուզմանց և նախապաշարմանց բորբոքումը երբեմն-երբեմն սաստիկ կզորանար:

Նույնը կտեսնենք նաև այն մշտնջենալոր կուլոն և մրցանաց մեջ, որով կարծեցալ պատրիարքութեան ցանկացողները իրար փոփոխակի կամբժեհին նույն Աթոռն: Թե անգամ մը Չամչյան վարդապետին ժամանակագրական տախտակները աչքե անցնենք,

կտեսնենք, որ 100 տարւան միջոցի մեջ, այսինքս է՝ 1600-են ց-1700 (այս երևույթը քիչ տարբերութեամբ նախընթաց և հաջորդ դարերու մեջ ալ կերևա), անվազն քառասուն ու վեց պատրիարքներ նույն Աթոռը ելած ու իջած են, ինչպես որ առանձին կուսակցութիւններն մեկը կամ մեկալը կզորանային:

Գծախատարար այս զեղծ անկարգութիւնը արևելք իրավունք ազգի համարված է: Թե ո՛րչափ շարիք ասկից կծագին ամենուն հայտնի է. անոնք որ առաջնորդելու և հովվելու պաշտոնը կանուրին, որովհետև միութեան կեդրոնն դուրս էին և բաժանալ ի հաղորդութենէ Քրիստոսի փոխանորդին, որմն առաջնորդաց իշխանութիւնը կախալ է, առանց ուղեկցույց առաջնորդի անուղիղ ճամբաներու մեջ կթափառեին, և ուրիշ բան չէին խնդրէ՛ր բայց եթէ ուսմկին հաճուցը, և ամենևին չէին խղճեր կաթողիկե ողջամիտ ժողովուրդը կրից և կուսակցութեանց զոհ ընել, հարստահարել և հայածել:

Այսպես՝ բանը հոն հասալ, որ ա՛լ հարկ էր կաթողիկյանները հերձվածո մասնակցութենէ բաժանել: Ժէ-երորդ դարուն կեսն Պարսկաստանի և զլիսավորարար Բասրայի ուղղափառք երկյուղածութեամբ կզգուշանային հաստվածայինս հերձվածողաց հետ հաղորդակցութիւնն ունենալեն: Որչափ ի Կոստանդինուպոլիս և ուրիշ ամեն տեղ ուղղամիտ անձինք կային՝ մարդկային նկատմունքը մեկդի ձգելով հերձվածո հաղորդակցութենէ կհեռանային և կաթողիկե Եկեղեցւոյ գիրկը կպատսպարեին»⁴⁶⁴:

Որքան ալ հայ կաթողիկ պատմիչները բարձունքը հանեն իրենց խանդավառ ճիշդը հայ ժողովուրդին մաս մը Հոռոմի փարախը մտած ըլլալուն համար, իրականութիւնն այն է, որ զանգվածային շէր հերետիկոսներու արշավը այդ փարախն ներս: Եվ այնուամենայնիւ կորիզ մըն էր, որ կստեղծվեր այդ կերպով հայ գաղութի ծոցին մեջ և կսպառնար տարածվիլ բոլոր առ բոլոր: Բերդը գրոհելով խելու համար՝ թումը մը քանդած էր Հոռոմ:

Տարբեր խնդիր, որ աշխարհի բոլոր պայերը իրենց բյուր գործակալներով երբեք ալ ի վիճակի պիտի չըլլային հափշտակելու համար դայն: Անոնք հաշվի առած չէին հայ ժողովուրդը: Անոնք գայն շփոթած էին դաստիարակներու, մուրաբաններու այն հեօ հոտին հետ, որոնք օր մը «կաթողիկ միլլեթի»-ն պիտի կազմեին, ճեղք մը բանալով հայ ժողովուրդի ծոցին մեջ: Բայց այդ ճեղքը երբեք չլայնեցալ, որովհետև դարերը նոր սերունդներ պիտի բերեին հայ ժողովուրդին՝ որոնք թույլ

⁴⁶⁴ Աղեմաճը վարդապետ Պալեյան, «Պատմութիւն կաթողիկե վարդապետութեան ի Հայաստան, Վիեննա, 1878, էջ 166—167:

⁴⁶³ Հ. Ն. Տաշյան, «Մայր ցուցակ...», էջ 1030:



պիտի շտային, որ դավանական վեճերը դպին հայ ժողովուրդի մեծ ճիգին բարձունք հասնելու:

Նոր սերունդներու այդ նոր ճիգերուն առջև անպտուղ պիտի անցնեին շոտլանդացի փորձերը հայ հոգին ևս ճեղքելու: Հայկական դատը, զոր այս դարը ստեղծեց և զոր սերունդներ փոխանցեցին իրարու նվիրական ավանդի մը պես, թույլ չտվավ, որ ճեղքվի հայ հոգին:

20. ՀՈՒՄԻ ԳՐՈՇԻՆ ԴԵՍ

Հոռոմ Հայ Եկեղեցվո ծոցին մեջ ճեղքվածք բանալու բազմաթիվ փորձեր կընեն Հայ Եկեղեցվո ամենն տկար մեկ պահուն: Հայ Եկեղեցին գրեթե գլուխ չունի: Հայ ժողովուրդի հոգևոր պետերը մխրձված էին տարբեր պայքարներու մեջ: Կոնիվը, զոր տասնյակ տարիներ մղեցին Հակոբ Զուղայեցին և Եղիազար Այնթապցին, ժամանակ չթողուց անոնց, որ պեսզի մտածեն Հայ Եկեղեցվո ուրիշ հոգերուն մասին: Անոնք շտեսան իսկ վտանգը, զոր հայ ժողովուրդին կբերեր Հոռոմի նոր քաղաքականությունը:

Արդեն ամբողջ դարը ալեկոծություն մը անցնել հետո, Պոլսո Աթոռը խոռվյալ կմնար դարուն վերջին տասնամյակին ալ: Տերտերյաներու վարչակարգեն հետո, որ տասնամյակ մը ավելի տիրեր էր Պատրիարքարանին մեջ, շորս պատրիարքներ փակեցին դարը, փոխնիփոխ գրավելով Աթոռը: Այդ պատրիարքներն էին Եփրեմ Ղափանցին, որ Աթոռը նստավ երիցս, նախ 1684-են 1686, հետո 1684-են 1698, ինչպես և երկու տարի հաջորդ դարուն սկիզբը 1701—1702. Մարտիրոս Կեսարացին, որ զույգ մը տարի, 1692—1694, Աթոռը գրավեց. Մելքիսեդեկ Սուպհին, որ երկիցս պատրիարք եղավ, 1698-են 1699 և 1700—1701. և վերջապես Մխիթար Քուրդիստանցին, որ կարճ պատրիարքություն մը վարեր 1699 հուլիսին 1700 դեկտեմբեր:

Արդ, այս շորս պատրիարքներեն Մարտիրոս Կեսարացիի արկածները և անփառունակ վախճանը արդեն գիտենք. ան Հոռոմի մեկ խամաճիկն եղավ, ու չբացավ զնաց սև բիծ մը միայն ձգելով Հայ Եկեղեցվո պատմության մեջ: Անոր հաջորդները քաջություն չունեցան կուրծք տալու վտանգին: Եվ անոնց թուլությունն՝ ավելի համարձակ սկսած էին դառնալ Հոռոմի գործակալները Պոլսո մեջ: Ասոնց բարոգությունը նույնիսկ Հայ Եկեղեցվո բեմը կհյրեր, ու կհաջողեր Հայ Եկեղեցվո պաշտոնյաներն իսկ որսալ ժողովուրդը, անդին, շվարած և անպաշտպան կմնար և ուժ չուներ մինակր կասեռնել վտանգը, որ արդեն իր ծոցը թափանցեր էր:

«Մելքիսեդեկի օրով ալ կշարունակվեին Կ. Պոլսո մեջ հայու ու ֆրենկի անվերջ վեճերը,— կըսե Օրմանյան,— և եկեղեցականներն ալ այս ու այն կողմի պաշտպաններ կհայտնվեին համարձակ, բայց տակավին խտրականություններ զորացած չէին, և նույնիսկ հոռոմեական դպրանոցի մեջ ուսում առնող արեղաներ, իբրև Հայ Եկեղեցվո վարչականներ պաշտոնավարության կմտնեին, ինչպես Խաչատուր Կարնեցի Առաքելյան՝ Պրոպագանդայի դպրանոցին աշակերտը, որ Սամաթիո Ս. Գևորգ եկեղեցին բարոզություն կընեն, և Մայր Եկեղեցվո բեմն ալ կբարձրանար»⁴⁶⁵:

«Հայու և ֆրենկի վեճը» այդ շրջանի պտուղն է առավելապես: Ան կբխեր մասնավորաբար այն նոր քաղաքականությունն, զոր ընդգրկած էին Հոռոմի գործակալները, իրենց տարած հայերը ստիպելով ամեն կապ խզել մայր դանգալածին հետ, ոտք չդնել այլևս անոր եկեղեցիները, ու լատին եկեղեցիներ միայն հաճախել, որովհետև հայ կաթոլիկ համայնք ու Հայ Կաթոլիկ Եկեղեցի դեռ չկար, և լատին եկեղեցիներու ծեսերուն հետևիլ կասկածելի դառնալ էր պետության աչքին: Եթե միսիոնարները դեռ կզգուշանային ծայրահեղությանց դիմել իրենց հարող հայերուն այս տատամսումն էր պատճառը⁴⁶⁶:

Դարուն վերջին շորս պատրիարքներեն Եփրեմ Ղափանցին էր միայն, որ անհանգիստ ըրավ Հոռոմը: Ան 1683-ին նվիրակ զրկված էր Պոլիս Եղիազար կաթողիկոսի կողմեն, և ուրիշ նվիրակներու նման, որ Պոլիս հասնել հետո հետամուտ կըլլային Պատրիարքական Աթոռը գրավել, 1684 օգոստոսին ինք ևս ձեռք անցուց զայն, հաղիվ 20 ամիս հաջողելով սակայն զայն պահել, այդ կարճ շրջանին մեջ անգամ փորձելով հակադրել Հոռոմի սաղրանքներուն, թեև չդիմեց բուն միջոցներու Պաշտոնն թղված 1686 ապրիլին, ան պիտի հաջողեր Աթոռը ձեռք անցնել 8 տարի հետո, 1694-ին և շորս տարի պատրիարք մնալ, հանդիսանալով «հայադավանության համարձակ պաշտպան մը, և լատինամիտներուն հայտնի հակառակորդ», թեև ճայդ միջոցին պատմությունը անոր չի վերագրեր խստության գործերը, ինչպես ցույց կուտան հայ կաթոլիկ պատմիչները, «սաստիկ օարբեր»⁴⁶⁷ կամ «դաժան քնամարտիչ»⁴⁶⁸ վերագրելով անոր այդ շրջանին իսկ:

Իր երրորդ տատոհուրություն ժամանակ էր միայն (1701—1702), որ Եփրեմ «ավելի

465 «Ազգապատում», Բ, էջ 2683:
466 Անդ, էջ 2695:
467 Չամչյան, Գ, էջ 727:
468 «Մխիթարյան հոբելյան», էջ 118:

ազդեցիկ կերպով աշխատեցավ կաթոլիկացյալ խմբակին կողմն, լատիններուն գրգռութեամբ սերմանված պառակտումներուն առջևն առնել, անոնց ազդեցութիւնը կոտորելով և անոնց գլխավորները հեռացնելով»⁴⁶⁹։ Սփրեմ իր այս երրորդ պատրիարքութեան գալն առաջ ալ անդիշող եղած էր կաթոլիկ հոսանքին դեմ, երբ իբր առաջնորդ կգանվեր Ադրիանուպոլիս, պաշտոն, որուն կողմած էր իր երկրորդ պատրիարքութենէն տապալվելի հետո։ Առիթը Ադրիանուպոլստ այն երեք հայ քահանաներն եղան, որոնք Պոլստ մեջ Խաչատուր Կարնեցի վարդապետին կողմն հրահանգվելի հետո, իրենց տեղը վերադարձած էին ժողովուրդը ևս հոռմեադավանութեան հրապտելու։ «Կափանցին փափագելով յուր վիճակին ներքին հուզմանց պատճառները պիտրեն խափանել, նախապէս սաստեց, վերջն արգիլեց նորատացիկ ֆոսնկացյալ վարդապետութիւնները խոսիլ, և երբ անոնք համառեցան իրենց ընթացքին մեջ, պարտավորվեցավ քահանայագործութենէն արգիլել, և քաղաքեն ալ հեռացնելով Կ. Պոլիս հղել Մելքիսեդեկի պատրիարքին, հանձնարարելով զանոնք զսպել կամ ուղղութեան բերել»⁴⁷⁰։

Աստուք սակայն հաջողեցան Մելքիսեդեկի պաշտպանութիւնը ձեռք ձգել և վերադառնալ իրենց տեղը, «և իբրև հաղթութիւն տարած իրենց առաջին միտքերը ավելի համարձակ կրկնել, ինչ որ պիտի զայրացնէր Եփրեմ առաջնորդը, որ այս անգամ եպարքոսական հրամանով քաղաքեն վտարել տվավ նույն երեքը, իբր օտարուսում անձեր և ժողովուրդը հուզելու և պառակտելու պատճառ եղողներ»։

Անոնք Պոլիս բերվեցան 1701 հուլիսին, և իբրև քաղաքական կասկածելիներ թիարանի բանտը արգելափակվեցան շղթայակապ։

«Այս երեքը պատմութեան մեջ կհիշվին՝ իբր հոռմեական սկզբունքներու առաջին զոհերը, թեպետև անունին հիշված չէ։ Բայց հայտնի կտեսնվի, թե ոչ երբեք իրենց միտքին կամ համոզման պատճառով կրած են դուրսնուն եկած արկածը, այլ պարզապէս լատինական բարեկամութեան և արևմտյան թեկնածութեան համար կասկածավոր նկատված, և բացարձակապէս պետական հարվածի մը ենթարկված են։ Ամեն առթի մեջ Եփրեմ Ղափանցիին անունը գործին հարակցած ըլլալուն, հոռմեականաց կողմն իբրև կաթոլիկութեան առաջին հարածիչ նկատված է»⁴⁷¹։

Եփրեմի ձեռք առած ժայրահեղ այս միջոցները չէին կրնար չվրդովիլ նաև Օրմանյանը. «Չենք վարանիր հայտարարել, թե որչափ գո-

վելի նկատենք Եփրեմի զգացումները ազգային Սկզբնցվո պաշտպանութեան հասար, նույնը պիտի շկրնանք քսել յուր վարմունքին և գործելու կերպին համար, զի բուռն ըսողիմութիւնը նպատակին հասնելու չի նպաստեր, որչափ կրնա ընել խոհանկան հաստատամտութիւնը։ Պատմական ճշմարտութենէ հեռացած շնք ըլլար ըսելով, թե Եփրեմի և նմաններուն խստութիւնները ավելի նպաստեցին հոռմեականներուն զորանալուն և կազմակերպվելուն, մինչ պիտի շկրնանային օգտվիլ՝ պատրիարքներու հաստատամիտ, բայց և խոհական ընդդիմութենէն»⁴⁷²։

Եփրեմ Ղափանցիին հետ դավանական վեճերը կմտնեն նոր փուլ մը։ Մեկ կողմն առիթ կդառնան, որ կաթոլիկութեան հարող հայերը հետզհետե խմբվին, համախումբ դարձնելով նաև իրենց գործունեութիւնը, և մյուս կողմն փորձեր ընեն Պատրիարքական Աթոռը ձեռք ձգելու, փորձեր, որ ժայրահեղ շափերու պիտի հասնեին այս անգամ, սասպրեղ բանալով եղբայրասպան կոիվներու ալ։

Կաթոլիկութեան համակրող հայերու դեմ «հարուցված հալածանքները անմիջապէս առաջ բերին հովանավորութիւն և աջակցութիւն միսիոնարներին և այս վերջիններին միջոցով ֆրանսիական դեսպանութեան կողմից։ Նրանք հալածվողներին պահում էին իրենց եկեղեցիներում և նույնիսկ դեսպանութեան շնքին մեջ, օգտվելով անձեռնմխելիութեան իրավունքից, կերակրում էին նրանց և նրանց ընտանիքները և հենց առաջին հարմար առիթից օգտվելով՝ ֆրանսական կամ Ֆրանսայի բարեկամ ուրիշ ազգերի նավերով դուրս էին բերում Պոլսից կամ նույնիսկ Թուրքիայի սահմաններից։ ԻՆարկե, նման աջակցութեան հետեանքը լինում էր այն, որ միսիոնարներին համակրող հայերը է՛լ ավելի բարեկամանում էին նրանց հետ՝ աստիճանաբար հաբելով կաթոլիկութեան»⁴⁷³։

Ամոթալի պայքարներու շրջանն էր, որ կբացվեր այսպէս, բազմաթիւ սև էջեր արձանագրելով մեր պատմութեան մեջ։ Հայ ժողովուրդի ծոցին մեջ ամեն զնով ձեռք բանալու կիրքը, որով բռնկած էին Հոռմի գործակալները, և իր ավանդութիւնները պաշտպանել վճռած դանդախածի մը համառութիւնը երկու կողմերն ալ ժայրահեղութեանց պիտի մղեր արդարև։

Բայց այդ ժայրահեղութիւններուն և անոնց ստեղծած շարիքներուն հակառակ, պատմութիւնը պիտի արձանագրեր նաև, թե

472 Անդ, էջ 2665—2666.
 473 Հովհաննէս Զավլյան, «Միսիոնարային միսիոնարութեան բաժանումը», «Հայրենիք» ամսագիր, 1931 դեկտ., էջ 104.

469 «Ազգապատում», Բ, էջ 2701.
 470 Անդ, էջ 2699.
 471 Անդ, էջ 2700.

ժողովուրդն մը կարելի չէ խել իր ավանդու-
թյունսերը, երբ անոնք կովանը կկազմեն իր
խիկ գոյության:

«Շարդներ,— կրես կեոն,— իրեն հատուկ
խորաթափանց շիտակությամբ գրում է. «Ես
արդեն նկատեցի, որ հայերը միշտ պահպա-
նել են իրենց հին ժառանգութիւնը, և այս
հանգամանքը կարելի է համարել ուղղակի
ապշեցուցիչ, եթէ շասնը գերբնական, որով-
հետև նրանք տասնամեկ դար գտնվում են
մահամեղականների տիրապետութեան տակ և
ընդ սմին այնքան աղքատ և տղետ են, որքան
կարող է աղքատ և տղետ լինել մի ժողովուրդ,
որ հասցված է այս աստիճան ստրկութեան:
Սակայն, չնայած այս պայմաններին,
նրանց հավատը, ինչպես արդեն ասել եմ,
մնացել է անսասան, և նրանք պահպանում
են այդ հավատը, շկամենալով փոխել մի ու-
րիշի հետ, անխախտ տանելով մահամեղական-
ների, իրենց անսահման տերերի, ճնշումնե-
րը, ինչպես նաև հոռմեական առաքելութեան-
ների բոլոր փորձերը, որոնք երկու դարի
ընթացքում անպտուղ ձգտում են, իրենց մի-
սիոնարների, քահանաների և վարդապետնե-
րի օգնութեամբ, գրավել նրանց զեպի իրենց
դավանութիւնը: Ես խոսքեր չունեմ նկարա-
գրելու այն խորամանկութիւններն ու այն
ժախսերը, որոնց այդ նպատակով դիմում էր
Հոռմի Աթոռը, սակայն ոչ մի բան ցանկաց-
րած հետևանքներին չհասցրեց, որովհետև՝
հենց որ այն հայերը, որոնք Եվրոպայում հե-
ռացել էին իրենց կրոնից, վերադառնում են
իրենց տները, իսկույն ավելի հայ են դառ-
նում, քան տեղում ապրողները և նորից
սկսում են անիծել կեոն պապին, ինչպես մե-
կին այն գլխավոր պատճառներից, որոնք
խանգարեցին արևելյան և արևմտյան եկեղե-
ցիների միութիւնը, անիծելով միաժամանակ
և նրա հաջորդներին և ատելութեամբ վերա-
բերվելով Հոռմեական Եկեղեցուն վարդապե-
տութեանը, ինչպես իրենց Եկեղեցուն միան-
գամայն հակասող վարդապետութիւն»⁴⁷⁴:

Տաղնապի դարը պիտի գար այսպես զգաս-
տացներ հայ ժողովուրդը: Ան իր հոգին ծա-
ռացուց Հոռմի արշավանքին դեմ: Ու թեև

հաջորդ դարերուն Հոռմ հաջողեցավ այնուա-
մասայիվ սպրդիլ հայ ժողովուրդին ծոցը ու
հատված մը որսալ, սակայն չկրցավ հազարը-
տակել մայր զանգվածը: Զգաստացավ Հայ
Եկեղեցին ալ: Եվ այդ դարեն հետո գրեթէ
այլևս չենք գտներ հոգևոր պետեր, որոնք
Հոռմի գիրկը վազեն, ինչպես վազեր էին
ցնորքներով լեցուցած ժամանակ իրենց հո-
գին: Կաթողիկոսական Աթոռին վրա այլևս
ճանկ չի հաջողիր նետել Հոռմ, և եթէ այսու-
հանդերձ որս կխել Սսի Աթոռեն, ու զայն
կորիզ կգարձեն խամաճիկ Աթոռի մը, Կի-
լիկյան տիտղոսով ջնարակելով իր ստեղծած
այդ կորիզը, սակայն ավելի կամրացնեն Սսի
բուն Աթոռը, իր դեմը պատնեշի վերածելով
զայն: Պոլսո Աթոռը կփրկվի իր ճանկեն ու
կկոթողանա իր ոտնձգութեանց դեմ, և եթէ
կըլլան Կոլոտի ու Նայանի նման մեղմ պատ-
րիարքներ, որոնք կջանան դավանական վե-
ճեր չզգոնել, կամ Գրիգոր Պասմաճյանի պես
ողբալի բացառութիւններ, որոնք Հոռմի վեր-
ջին զոհերը կըլլան, Պատրիարքական Աթոռին
վրա կուզան սակայն դեմքեր ալ, որոնք
ամուր կմնան հայ ավանդութեանց հանդեպ
իրենց նախանձախնդրութեան մեջ, երբմն
նույնիսկ, ավա՞ղ, ծայրահեղութեան հասցնե-
լով այդ նախանձախնդրութիւնը: Տաղնապի
դարը կամրացնեն Հայ Եկեղեցին և զայն
ցմիշտ կփրկեն անձնասպանութեան վտանգեն:

Հայ ժողովուրդը հաջողեցավ պահպանել
արդարև իր հոգեկան ժառանգութիւնը՝ իր
պապեանական ավանդութիւնները, ինչպես և
իր Եկեղեցին անոնց հետ: Հայ պատրիարք-
ներու ձեռք առած մեղմ կամ բիրտ միջոց-
ները չէին, որ կասեցուցին Հոռմի գրոհը,
ինչպես այս դարուն նույնպես և անոր հա-
ջորդներուն: Հայ ժողովուրդի ավանդապաշտ
ոգին էր, որ գուրգուրաց իր սրբութիւններուն
վրա, և անխոցելի դարձուց զանոնք, պահեց
զանոնք սուրբ և անարատ: Ճիշտ է, Հոռմ հա-
ջողեցավ հայ ժողովուրդի ծոցեն մասնիկ մը
խելի ի գին հազար նենգութեան, եղկելի
շրթունքներ որսալ իր մեղրածոր հողաթա-
փերուն, բայց երբեք չկրցավ արմատը պղծել:
Խայծերը անոր հասնելու ուժը չունեցան:

474 Առ. «Հայոց պատմութիւն», Գ, էջ 337:

(Շարունակելի)